ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

No 1144-Ն «14» դեկտեմբերի 2012թ.

## ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՁԵՌՆԱՐԿՆԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 6-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 12-ի N 1579-Ն որոշմամբ հաստատված Հավելված 1-ի 10-րդ կետի <<իթ>> ենթակետի պահանջները՝

Հրամայում եմ՝

1. Հաստատել հանրակրթական, այդ թվում՝ նախադպրոցական, ուսումնական հաստատություններում օգտագործվող ձեռնարկների փորձաքննության և գործածության երաշխավորման կարգը՝ համաձայն Հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ԱՐՄԵՆ ԱՇՈՏՅԱՆ**

*Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ*

*ՀՀ կրթության և գիտության նախարարի*
*2012թ.դեկտեմբերի 14-ի N1144-Ն հրամանի*

# Կ Ա Ր Գ

# ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՁԵՌՆԱՐԿՆԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) կողմից հանրակրթական, այդ թվում՝ նախադպրոցական, ուսումնական հաստատություններում՝ անկախ դրանց կազմակերպաիրավական ձևից և ենթակայությունից (այսուհետ՝ Հաստատություն) օգտագործվող ձեռնարկների՝ ուսումնաօժանդակ նյութերի և ուսումնադիտողական պարագաների, ուսումնամեթոդական ուղեցույցների, ուսումնամեթոդական գրականության, ուսումնադիդակտիկ նյութերի, շտեմարանների, թեստերի, վարժությունների և խնդիրների ժողովածուների, քրեստոմատիաների, ինչպես նաև մանկական և դպրոցական գրականության (այսուհետ՝ Ուսումնական նյութ) փորձաքննության և գործածության երաշխավորման հետ կապված իրավահարաբերությունները:
2. Ուսումնական նյութի գործածության երաշխավորության գործընթացն իրականացվում է փորձաքննության միջոցով: Փորձաքննությունը փորձագետի կողմից Ուսումնական նյութի՝ հեղինակային բնօրինակի (թարգմանական օրինակի) վերլուծության գործընթաց է, որի նպատակը համապատասխան նյութին ներկայացվող պահանջներին հեղինակային բնօրինակի (թարգմանական օրինակի) համապատասխանության բացահայտումն է:

3. Փորձաքննության ներկայացված աշխատանքը Ուսումնական նյութի որևէ տեսակին համապատասխանությունը որոշելիս՝ հիմք են ընդունվում Հայաստանի Հանրապետության հանրակրթության, այդ թվում՝ նախադպրոցական կրթության բովանդակությունը, ուսուցման գործընթացը կանոնակարգող իրավական ակտերը, մանկավարժական, գիտական գրականության մեջ ընդունված սահմանումները, հասկացությունները, ձևակերպումները և սույն կարգի դրույթները:
4. Փորձաքննության արդյունքում կազմվում է փորձագիտական եզրակացություն: Փորձագիտական եզրակացությունն ընդգրկում է փորձաքննության ներկայացված Ուսումնական նյութի ամբողջական վերլուծությունը՝ ներառելով փաստարկներ և հիմնավորումներ հեղինակային աշխատանքի՝ ուսումնական հրատարակության բովանդակությանը և կառուցվածքին ներկայացվող չափանիշներին և ցուցիչներին (գիտականություն, մատչելիություն և մանկավարժական, մեթոդական, լեզվաոճական և այլ բնութագրիչներ) համապատասխանության վերաբերյալ, որոնք սահմանում և հաստատում է Նախարարությունը:
5. Ուսումնական գրականության փորձաքննությունն իրականացնում է <<ՀՀ կրթության և գիտության նախարարության կրթության ազգային ինստիտուտ>> ՓԲԸ-ն (այսուհետ՝ ԿԱԻ)՝ իր մասնագետների, մասնագիտական խմբերի, բարձրագույն մասնագիտական, նախնական և միջին մասնագիտական կրթություն իրականացնող ուսումնական հաստատությունների համապատասխան ստորաբաժանումների (ամբիոններ) մասնագետների և հանրակրթական, նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների, ինչպես նաև, անհրաժեշտության, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի համակարգի գիտական, գիտահետազոտական կազմակերպությունների գիտաշխատողների ներգրավմամբ:
6. ՀՀ կրթության և գիտության նախարարությունն իրավասու է Ուսումնական նյութի փորձաքննությունը պատվիրել և իրականացնել նաև այլ կազմակերպությունների միջոցով՝ սույն կարգի պահանջներին համապատասխան:

## II. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

7. Սույն կարգի 1-ին կետում թվարկված Ուսումնական նյութի տեսակները ԿԱԻ փորձաքննության են ներկայացվում հեղինակի (հեղինակների), հրատարակչի, պետական պատվերով նախատեսվածների դեպքում՝ Նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից:
8. Աշխատանքը (թղթային և էլեկտրոնային տարբերակով) Պատվիրատուից ստանալուց հետո, ԿԱԻ-ն 30-օրյա ժամկետում իրականացնում է փորձաքննություն և կազմում փորձագիտական եզրակացություն: Անհրաժեշտության դեպքում փորձաքննության ժամկետը կարող է երկարաձգվել՝ այդ մասին տեղեկացնելով փորձաքննության ներկայացրած կողմին՝ նշելով երկարաձգման պատճառները և ժամկետը:
9. Փորձագիտական եզրակացությունը Պատվիրատուի կողմից ներկայացվում է Նախարարություն, բացառությամբ պետական պատվերով նախատեսվածների, որոնք Նախարարություն են ներկայացվում ԿԱԻ-ի կողմից:
10. Նախարարության հանրակրթության վարչությունը քննարկում է փորձագիտական եզրակացությունը և ներկայացնում կարծիք:
11. Փորձագիտական դրական եզրակացության և հանրակրթության վարչության դրական կարծիքի հիման վրա ՀՀ կրթության և գիտության նախարարը ներկայացված Ուսումնական նյութը հրամանով երաշխավորում է գործածության:
12. Բացասական կարծիքի դեպքում Ուսումնական նյութը վերադարձվում է ներկայացնողին՝ կցելով հիմնավորումները:
13. Փորձագիտական բացասական եզրակացության դեպքում ներկայացված պետպատվերով տպագրվող Ուսումնական նյութը Նախարարությունը վերադարձնում է հեղինակին՝ կցելով փորձագիտական եզրակացությունը:
14. Փորձագիտական եզրակացության կամ բացասական կարծիքի վերաբերյալ անհամաձայնությունների, դիտողությունների, առարկությունների դեպքում Պատվիրատուն կարող է դիմել Նախարարություն՝ կրկնակի փորձաքննություն իրականացնելու նպատակով: